

ՌՈՒՐԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ

## ՆԵՐՍԵՍ ԱՃՏԱՐԱԿԵՑՈՒ ԿՏԱՐԱԺ ԽՈՃՈՐ ԳԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻՆՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

«Միքէ Ներսէս եպիսկոպոսը չէ՛ր, որ գրափ Պապիկիշի ճևա՛մով Հայաստան ու հայոց մեծ մասը քաղաքներով, հորդուներով՝ ոսի ձևով տակը բերեց»:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ, «ՎԵՐԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ»



բբաս Միրզան, ինչպես հայտնի է, 1826 թվականի հուլիսի 25—26-ին, 60.000-անոց բանակով, առանց պատերազմի հայտարարելու, հարձակվում է Ղարաբաղի վրա և պաշարում Շուշին: Այդ նույն ժամանակ Երևանի սարդարի զորքերը մտնում են Փամբակ և Շորաքյալ: Այսպիսով, սկսվում է ռուս-պարսկական պատերազմը: 1826 թվականի աշնանից ռուսական զորքերը համախմբելով իրենց ուժերը, տեղական ժողովուրդների օգնությամբ, մեկը մյուսի հետևից հաղթանակներ են տանում պարսից հրոսակների դեմ:

Գուցե ո՛չ ոք այնքան չէր ոգևորվել պատերազմի սկսումով, որքան Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցին: Հայրենասեր հուզվողականը այդ պատերազմի մեջ է տեսել հայ ժողովրդի վաղեմի երազանքի իրականացումը: 1826—1827 թվականի ձմեռը պարսից զորքերը հաղթանակներով և գրավում էին մեջ նա ամենքին ավետել է պատերազմի լուրը, խրախուսել, հորդորել՝ ոչինչ չինայել Հայրենիքի ազատության համար:

«Հասաւ ժամը,— գրում է նա իր բարեկամներին,— երբ աչքով պիտի տեսնենք Արարատեան աշխարհի և հայոց ազգի ազատութիւնը, հասաւ ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերականգնէ իր վաղեմի անկախութիւնը. ոտքի՛ կանգնէք, հայոց քաջեր, թոթափեցէ՛ք պարսից լուծը, ուրախացէ՛ք ալեզարդ Մասիսին, մի անգամ արիւնով ներկեցէք հայրենի հողերը ու ապա

ապրեցէ՛ք ազատ... Ժամ է արդէն, օ՛ն անդր... հիմա՛յ— կամ երբէ՛ք...»<sup>1</sup>:

Պատերազմն սկսելուն պես, Ներսէսն անմիջապես գործի է անցնում. նա հանդես է գալիս ոգեշունչ մի կոչով՝ ուղղված Անդրկովկասի հայության, որի մեջ նկարագրում է հայերի անտերունջ վիճակը. պետականությունից զրկված լինելը և այլն ու հորդորում հետևել իրենց ազատասեր պապերի քաջագործության օրինակներին, անվախ դուրս գալ և կռվել թշնամու դեմ: «Յիշեցէ՛ք ձեր հարց մեծամեծ ախրագործութիւնները,— գրում է նա,— և անմահնելի առաքինութիւնները: Դուք նոցա որդիքն էք, նոցա արիւնը եւ է զալիս ձեր երակներում... Մի՛ վախիք պարսից ձայնից և աղաղակներից: Նոցա բոլոր ուժեր ձշի և սպառնալիքների մէջ է, և ո՛չ թէ ճշմարիտ զօրութեան և խելացիութեան... Արիացէ՛ք, մի՛ վախիք: Նոցա յանկարծակի յարձակումը անդէնք և քաղաղ շինացոյց վրայ, չի կարող սասանեցնել Ռուսիոյ Օգոստոսիսը: Կայսեր անյաղթելի զօրաց»:

Հայրենասեր և իր հոտի անձնվեր հովիվը Մակարայեցու խոսքերով է ոգևորում իր հոտին և հորդորում պայքարել մինչև վերջ. «Մեղցուք քաջութեամբ ի վերայ եղբարց մեռոց, և ոչ խառնեսցուք զանուն վատութեան ընդ արոթիւնա քաջութեան... Դիմապրեցէ՛ք թշնամուն և սորա արբանակներին կամ ռուսաց զորքերի հետ միասին և կամ թէ մի

1. Ա. Երեցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի հայր, մասն Ա, Թիֆլիս, 1894 թ., էջ 268—269:

ուրիշ կերպ, որ աւելի յարմար կը լինի ներկայ աւագակօրէն յարձակմանց միջոցին, իսկ թէ հարկ լինի, մի՛ խնայէք ձեր արեան վերջին կաթիլը...<sup>2</sup>»:

Այսպիսով, Աշտարակեցին իր այս հայրենասիրական կոչերով պատերազմի մարտա-

կան հատուկ հրովարտակ է ուղարկում Աշտարակեցուն՝ հայտնելու ժողովրդին արքունիքի գոհունակութիւնը հայերի ցույց տված հավատարմութեան համար, հույս ներշնչելով՝ որ շուտով նրանք կազատվեն թշնամու լծից: Ներսես Աշտարակեցին հազարավոր



Ներսես Աշտարակեցի

հրավեր շեփորն է հնչեցնում ընդդէմ անազորույն թշնամուն:

Հայոց աշխարհն ուրախութեամբ է ընդունում հեղինակավոր հոգեւորականի կոչը և անում կարելին՝ ուռա զորքերին օգնելու համար: Այդ բացահայտ տեսնում էր ուռաց արքունիքը և քաջալերելու համար կայսերա-

օրինակներով, հայերեն և ուսերեն, տպել է տալիս հրովարտակը և ցրում, կցելով յորան իր քաջալիրական խոսքը. «Քաջալերեցարո՛ւք միաբան առհասարակ հարք և որդիք, ծերք և տղաք, և զձայն ցնծութեան ուրախութեան ձեր տարածեցէ՛ք յազգս ձեր՝ զի ձեր է յաղթանակն և զաւար կայսերական մշտնջենաւոր ողորմութեանց հարուստ վայելչութեամբ ժառանգեսցիք յայսմհետէ դուք

2. Ա. Երիցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան և Կովկասի հայր, մասն Ա, Թիֆլիս, 1894 թ., էջ 241—242:

և որդիք որդուց ձերուց յազգս յաւիտե-  
նից...»<sup>3</sup>:

Մեծ հայրենասիրը չի բավարարվում կո-  
շով և ճառերով. նա ձեռնարկում է հայ կա-  
մավորական գնդի հավաքագրման և կազ-  
մակերպման կարևոր գործը: Նրա կողմը  
նախապես ոտքի էին հանել արդեն բազմա-  
թիվ հայրենասիրների: Թրիլիսիի գեներալ-  
նահանգապետ Սիպյազիի ղեկավարությամբ  
գործող հանձնաժողովը հայկական կամավոր-  
ական գնդի համար շատ կարճ ժամանա-  
կամիջոցում հավաքագրում է 600 հոգի, հա-  
տույն կանոններ են սահմանվում նրանց հա-  
մար. նրանք պիտի կերակրվեին, հագնվեին  
ու զինվեին, ինչպես նաև վարձատրվեին  
կայսերական միջոցներով: Հայկական կա-  
մավորական ջոկատների ստեղծվելը մի ա-  
վելորդ անգամ ցույց տվեց հայ ժողովրդի  
բուռն նվիրվածությունը Ռուսաստանին: Թրի-  
լիսիի զինվորական նահանգապետ Սիպյա-  
զիներ, խոսելով հայերի հավատարմության  
մասին, իր 1827 թվականի մայիսի 27-ի մի  
կոչի մեջ գրում է.

«Անցյալ տարի, պարսկական զորքերի մեր  
սահմանները ներխուժելու հենց սկզբում,  
հայերը աչքի ընկան իրենց անվախությամբ  
թշնամու դեմ, դժբախտություններին դիմա-  
նալու իրենց անխախտելի կայունությամբ և  
դեպի քրիստոնեական կրոնն ունեցած ան-  
սասան նվիրվածությամբ ու Ռուսաստանի  
հանդեպ ունեցած օրինակելի հավատարմու-  
թյամբ...»<sup>4</sup>:

Ներսես Աշտարակեցու ցանկությունն էր  
անձամբ առաջնորդել հայ կամավորական  
խմբերը և ուսաց առաջապահ զորքերի հետ  
միասին արշավել ուղղակի Երևանի վրա:

1827 թվականի մարտ ամսին հայ աշխար-  
հազորական ջոկատը, Ներսեսի ղեկավարու-  
թյամբ, գորահանդես է կատարում Թրիլի-  
սիում: Ահագին խուռն բազմության ներկա-  
յությամբ Ներսեսը ձի նստած ջնդռնում է  
զորահանդեսը: Նա մի սրտաշարժ ու ոգևորիչ  
ճառ է ասում և խրախուսում զինվորներին:

Հայոց գունդը, չնայած այս բոլորին, դեռ  
բոլորովին պատրաստ չէր պատերազմի դուրս  
գալու համար: Ներսեսը ճանապարհ ընկավ  
Ապրիլի 2-ին Թրիլիսիից Զալազղլի՝ ուսաց  
առաջապահ զորքին առաջնորդելու, իսկ մա-

յիսի 15-ին վանքի եկեղեցում մեծ հանդի-  
սավորությամբ կատարվեց հայ կամավորա-  
կան ջոկատների երգման արարողությունը և  
զորակի օրհնությունը: Ներսեսը ներկա էր,  
լայց այդ օրը բազմահազար ժողովրդի ներ-  
կայությամբ ոգևորիչ ճառով հանդես եկավ  
հայրենասեր հոգևորական Հարություն քա-  
հանա Ալամդարյանը: Մոտ հազար հոգուց  
բաղկացած հայ կամավորական անգլ-  
մաճակատ մեկնեց 1827 թվականի մայիսի  
կեսերին:

Ապրիլի 2-ին ուսաց առաջապահ զորքը,  
գեներալ Բեկինդորֆի հրամանատարու-  
թյամբ, Բորչալուից ճանապարհ ընկավ Երե-  
վան: Նրանց ուղեկցում էր քաջ ներսես Աշ-  
տարակեցին: Ռուսաց զորքը նպատակ էր  
դրել իրեն գրավել նախ էջմիածինը և ապա  
պաշարել Երևանը:

Ամբողջ ճանապարհին ժողովուրդը մեծ  
հրճվանքով և ուրախությամբ էր դիմավոր-  
ում զորքերին, բազմաթիվ հայ գյուղացի-  
ներ հոժարակամ միանալով ստվարացնում  
էին հայ կամավորների թիվը: Ապրիլի 13-ին  
ուսաց զորաբանակի Ներսեսի ուղեկցու-  
թյամբ մտավ էջմիածին: Զինվորները ան-  
շափ ուրախացել ու ոգևորվել էին վանքի  
պարիսպների վրա տեսնելով ծածանվող ուս-  
ական դրոշակը: Միաբանությունը խաշով,  
խաշվառով և զանգակների դողալով դիմա-  
վորեց եկողներին: Զորքը մեծ ջերմեռանդու-  
թյամբ մտավ Տաճար և սկսեց աղոթել:

Ներսեսը նորից գավազանը ձեռքին ավե-  
տեց միաբանությանը, թե հասավ ազատու-  
թյան ժամը, պետք է արիանալ:

Շուտով Բեկինդորֆը պաշարեց Երևանը,  
իսկ մայիսի 12-ին Թրիլիսիից ճանապարհ  
ընկավ ինքը Պասկևիչը ուսաց գլխավոր  
բանակի հետ:

Աշտարակեցին վանքում կազմակերպել էր  
ուսա հիվանդ զինվորների խնամքը, որոնք  
բավականին շատ էին՝ տեղի կլիմային ան-  
սովոր լինելու պատճառով:

Պասկևիչը Երևանի պաշարման գործը  
հանձնեց գեներալ Կրասովսկուն, իսկ ինքը,  
հիմնական ուժերով, առաջ շարժվեց դեպի  
Նախիջևան և պաշարեց Աբբասաբադը: Երե-  
վանի պաշարումը ձգձգվում էր, և ահա Կրա-  
սովսկին, զինվորներին հիվանդանալուց դեմ  
պահելու համար, զորքը տեղափոխում է  
Բաշ-Աբբասանի լեռները՝ թողնելով էջմիա-  
ծնում իր հիվանդ զինվորներին, որոնք 1.000  
հոգուց ավելի էին:

Պարսկական մի խոշոր բանակ, Աբբաս  
Միրզայի գլխավորությամբ, օգտվելով այն  
հանգամանքից, որ Պասկևիչը գլխավոր բա-

3. Հուլիսի ողորմության Աստուածազօր Մեծափա-  
ռութեան Ինքնակալի և Կայսեր Ամենայն Ռուսաց Նի-  
կողայոսի Առաջնոյ առ ազգս Հայոց որ ի Վրաստան,  
1827 թ., Տփլիս, էջ 9 և 15:


4. Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոեդովը և հայ-  
ուսական հարաբերությունները, Երևան, 1947 թ.,  
էջ 41:

5. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի  
«Տեղեկագիր», 1951 թ., № 11, էջ 11—39:

նակով գտնվում էր Նախիջևանի կողմերը, իսկ Կրասովսկին՝ Բաշ-Աբարանում, Արաքսի մյուս ափից անցնում է ռուսաց զորքի թիկունքը և օգոստոսի կեսերին պաշարում էջմիածինը: Արբաս Միրզան մտադիր էր էջմիածինը գրավելուց հետո արշավել Թբիլիսի: Շահզադեն սպառնում էր Ներսեսին՝ վանքը հիմնահատակ կործանել, եթե նա հոժարակամ չհանձնվի: Իսկ քաջարի եպիսկոպոսը պատասխանում է. «Վանքը հզոր է Աստուծոյ զօրութեամբ, ա՛ռ, եթէ կարող ես»<sup>5</sup>:

շնորհակալությոն է հայտնում Աշտարակեցուն և վանքի միաբանությանը, որոնք էջմիածնի պաշարման ժամանակ «կու պատէրազմէին, մանաւանդ Ներսէս արհին, որ թօփի կրակ նա կու տար»<sup>7</sup>:

Լսելով վանքի պաշարված և նեղ դրությունը, գեներալ Կրասովսկին շտապում է շուտափույթ օգնության հասնել: Նա իր հետ վերցնում է 2.500 զինվոր և շարժվում էջմիածին: Մեծ դժվարությամբ Կրասովսկուն հաջողվում է ճեղքել պարսից օղակը և



Երևանի բերդը

(Նկար Քելոյի, 1841 թ. նոկտեմբեր)

Դրդրում էր ամբողջ Արարատյան դաշտը, ողջ գիշերը պարսիկները ուրակոծում էին վանքը: Օրհասական էր պաշարվածների դրությունը, օգնությունը ուշանում էր, բայց էջմիածնում եղած փոքրաթիվ զորքերը Ներսես Աշտարակեցու ղեկավարությամբ հերոսաբար դիմադրում էին և պաշտպանում վանքը, այնտեղ եղած ռազմամթերքը, սննդամթերքի պաշարներն ու հիվանդանոցը:

Մեղ է հասել մի հետաքրքիր վավերագիր — Թբիլիսիից Սիմեոն եպիսկոպոս Բզնունու 1827 թվականի օգոստոսի 27-ին գրած նամակը Աշտարակեցուն, որի մեջ նամակի հեղինակը ռուսական նահանգապետի անունից

հասցնել օգնություն: Նրա բանակը առանձնապես մեծ կորուստ է ունենում էջմիածնի դաշտում: Դեպքերին ականատես Աշտարակեցին այսպես է նկարագրում պատերազմի այդ պահը. «...Ձի հետևազօրք ռուսաց ժամ 12 ճանապարհորդեալք ընդ անջուր անապատ և լանդիման արեգակնակէզ օդոց վճարեալ զպատերազմն ութն ժամուց, ընդ ժամանելն ի ջուր այգեստանեայց Կաթողիկէ էջմիածնի, գունդն առաջին անցեալ յապահովի դալր ժամանէր յԱթոռն, և զունդն վերջին ընդ Նորին Գերազանցութեան քաջամարտ ղեներալ Աֆանասի Իւանիչ Կրասովսկույ

<sup>5</sup> Ա. Գ. Երեցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կոզկասի հայք, էջ 290:

<sup>7</sup> Հայկական ՍՍՏՖ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, Քղթուրպակ № 57, վավերագիր № 357:

կաշեալ զառաջս թշնամեացն, զայդ պատե-  
րազմաւ. դունդն, որ ի միջի որպէս ի տեղի  
ապահովի բացակայ առաջնոցն և ի վերջ-  
նոցն անկանի ի վերայ ջրոցն, գոլով յաղ-  
թահարեալ յուժգնութեանց ծարաւոյ, ուր ի  
վերայ հասեալ հեծելագորաց թշնամեաց  
դարձնակալաց մերձ առ նոսա, սրահար,  
նիզակահար սպանանեն զանկեալսն ի վերայ  
ջրոց զհարկաւորս քանիս, գերեզմանն և  
անելի քան գերկերիւրս, մինչև ցժամանել առ  
նոսա վերջին բանակին...»<sup>8</sup>:

Իսկ ի՞նչ էր տեղի ունենում այդ ժամանակ  
վանքի պարիսպների ներսում, երբ դրսում  
շարունակվում էր ոռոսաց զորաբանակի մա-  
հու և կենաց պայքարը: Ամբողջ միաբանու-  
թյունը, ներսեսի գլխավորութեամբ, զգես-  
տավորված, Ս. Իշման սեղանի առաջ, սրբու-  
թյունները ձեռքներին, աղերսում էին Բար-  
ձրյալին՝ ոռոսաց զենքի հաղթութեան հա-  
մար: Ներսես Աշտարակեցին բարձրացել  
էր Ս. Գեղարդը և արտասովալից աչքերով հա-  
ջողութուն էր մաղթում ոռոսաց զորքերին և  
ինքն իսկ գրում է իր շրջաբերականի մեջ.  
«Յուսացեալք յօգնականութիւն Տեսուն Աս-  
տուծոյ, միաբան առ հասարակ, փութացար  
ի սուրբ յեկեղեցին և մատուցեալ զգեմնեան-  
դական աղօթս բազում արտասուօք, խնդրե-  
ցաք զօգնականութիւն յեկեղեցի»<sup>9</sup>: Հայ ժողո-  
վրդի մեծ հայրենասերը այդ վեհ ընդհանր  
հիշեցնում էր մի ուրիշ ներսեսի, որը երբեմն  
Նպատ լեռան նվիրական բարձրութիւնների  
վրա աղոթում էր հայոց քաջերի հաղթութեան  
համար:

Երբ պատերազմը վերջացաւ, կենդանի  
մնացած զինվորները հասան վանք: Դար-  
բասները իսկույն բացվեցին: Վանքում եղող-  
ները խաչ ու խաչվառով դիմավորեցին իրենց  
փրկիչներին: Հուզված ելույթ ունեցաւ Աշ-  
տարակեցին. «Այս մի բուռն ոռոս եղբայրնե-  
րը... ձեռքեցին, անցան երեսուն հազար կա-  
տաղի զօրաց միջից: Այս սակաւաթիւ դունդը  
անմահ փառաց արժանացաւ և գեներալ Կրա-  
սովսկու անունը յափտնական անջնջելի  
կմնա էջմիածնի տարեգրութեանց մեջ»<sup>10</sup>:

Էջմիածնի համար մղված այս հերոսա-  
մարտը փայտեր հրամանով անցաւ ոռոսա-  
կան զորքերի մեծ հաղթութիւնների շարքը և

Կրասովսկին էլ արժանացաւ բարձր պար-  
գելի<sup>11</sup>:

Պատկերվել ստանալով Կրասովսկու հետ  
կատարված տխուր զեպքերի լուրը, շտապեց  
էջմիածին նրան օգնելու, իսկ Աբրահամ Միր-  
զան, լսելով Պատկերի վալը, իր զորքով նա-  
հանջում է խոյ: Ռուսական բանակն այժմ  
նորից անցնում է հարձակման. սեպտեմբե-  
րի 13-ին նրանք պաշարում են Սարդարա-  
բադը: Պաշարման մասնակցում էին նաև  
հայ աշխարհազորականները:

Սակայն ոռոսական զորքերը հացի պա-  
շարների խիստ կարիք էին զգում: Այսօրի-  
նակ նեղ դրութիւնից նորից Աշտարակեցին  
է, որ փրկում է: Նա մի փոքր զնդով, իրեն  
օգնական ունենալով Կրասովսկուն իր զո-  
րում է մեծ քանակութեամբ հացահատիկ և  
հասցնում զորքին:

Սարդարաբադը պաշարող ոռոս զորքերը և  
հայ կամավորական դունդը դիմում են վրձ-  
նական գործողութիւնների: Աշտարակեցին  
ինքը մի կոչով դիմում է Սարդարաբադում  
գտնվող հայ բնակիչներին և հորդորում նրանց  
հակառակվել «...հաւոր զօրաց տիեզերա-  
սասան Կայսերութեան Ամենայն Ռուսաց...» և  
թնդանթաձգութիւնից առաջ «բերդիցն ելա-  
նել յայտնի կամ անյայտ կերպիւ, և թողուլ  
զհակառակութիւնն և զպատերազմն անօգ-  
տակար անձանց իւրեանց» և այլն<sup>12</sup>: Կոչը  
ստորագրված է՝ «Արքեպիսկոպոս Հայոց  
Վրաստանու Ներսէս, 1827, սեպտեմբերի 12,  
ի գիւլն Քեաւակարիս»:

Ամսի 18-ին, քսան ոռոսական հրանոթնե-  
րի ուժակութեան և տեղի հայերի սպառ-  
նալիքի տակ, բացվում են բերդի դռները:  
Ժողովուրդը խաչով ու խաչվառով դիմավո-  
րում է ոռոսաց բանակին<sup>13</sup>:

Սարդարաբադի գրավումից հետո սկսվում  
է Երևանի պաշարումը, որի գրավումը ձեռ-  
նարկում է:

Ինչպէս միշտ, այս անգամ ևս Պատկերին  
օգնութեան է հասնում Ներսէս Աշտարակե-  
ցին: Նա կոչեր է ուղարկում էջմիածնի, Օշա-  
կանի և Աշտարակի հայ գյուղացիներին՝ օգ-  
նութեան հասնելու ոռոսական քաջարի զոր-  
քերին: Բերենք այդ կոչերից մի օրինակ.

11. Հետագայում էջմիածինը օգոստոսի 17-ին բն-  
կած զինվորների հիշատակին կանգնեցնում է մի կո-  
թող-հուշարձան:

12. Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի ի Մա-  
րայ մագիստրոսէ Մսերեանց, 1876 թ., Մոսկվա,  
էջ 98—99:

13. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան,  
Արխիվային բաժին, Կաթողիկոսական գիվան, թղթ-  
թաղանակ № 57, վավերագիր № 133:

8. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Ար-  
խիվային բաժին, Կաթողիկոսական գիվան, թղթա-  
պանակ № 58, վավերագիր № 133:

9. Նույն տեղում:

10. Ա. Դ. Նրիցյան, Ամենայն Հայոց Կաթողիկո-  
սութիւնը և Կովկասի հայր, էջ 294:

«Հասարակութեան հայոց Աշտարակցոց և Օշականցոց.

Գրեմ բազում օրհնութեամբ, զի ընդ ժամանակ գրոյս իսկոյն առանց ըռպէ անցուցանելոյ թողեալ զամենայն զհարկաւոր գործրս ձեր պատկանեալս վասն տան և ընտանեաց ձերոց՝ ամենայն թուանք ունեցողքն և ի ձէնջ, և ի թուանք շունեցողացն ևս ոտհաւոր կտրիճ տղայք շատ հաւաքեալ հասուսչիք առ մեզ աստ՝ մինչև ցմտանել արեւա-

կան թնդանոթներ մինչև լույս ռմբակոծում էին քաղաքի կրկնակի հաստ ու բարձր պարիսպները:

Բերդի բնակչութիւնը այլևս չէր դիմանում, կանայք և երեխաներ լացով ու հառաչանքով դիմում էին անգութ խանին, որպէսզի անձնատուր լինի: Խանը սպառնում էր նրանց:

Մագեց վերջապէս հոկտեմբերի 1-ի ավետաբեր առավոտը: Հուսահատված ժողովուր-



Ռուսական զորքերի զորահանդեսը Երևանում 1827 թվականի հոկտեմբերի 1-ին

(Նկար Ռուբոյի)

կանն այսօր որ է շորեքշաբաթ և քսան և ութ սեպտեմբերի. և եթէ մինն ի ձէնջ ծուլասցէ և յամեսցէ, խմասցի այնպիսին որ է թէ իմ աշաց լոյս ևս լինիցի, ոչ խնայեցից հանել և բաց ընկենու:

Արքեպիսկոպոս Հայոց Ներսէս<sup>14</sup>

Ներսէս Աշտարակեցու կողմը ոտքի էին հանում հայ գյուղացիության և նրանք խրմբերով դիմում էին Երևանի բերդը պաշարած ռուս և հայ զինուորին օգնության: Սեպտեմբերի 30-ի գիշերը 40 ռուսական պաշարողա-

ղը բարձրանալով պարիսպների վրա, թաշկինակներով նշան էին անում ռուսներին որ դան, բերդը անձնատուր է լինում. շատերը վատնգը հաշվի չառնելով վազում էին բերդի պատերից ներքև և շնչասպառ հասնում իրենց ազատարարներին: Բացվում են դարբասի դռները և ռուսական գվարդիական քաշարի զնդերը և հայ աշխարհազորական զորամասերը մտնում են քաղաք:

Հասան խանը, ուրիշ 7 խաների և 4.000 պարսիկ զինվորների հետ գերի են ընկնում: Ռուսները գրավում են 49 մեծ և 50 փոքր թնդանոթ, 4 դրոշակ և ուրիշ սազմամավար<sup>15</sup>:

14. Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947 թ., էջ 54:

15. Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1951 թ., № 2, էջ 69:

Հայերը, ծեր թե մանուկ, վազում էին ընդառաջ իրենց փրկիչներին, լալիս ու փարվում զինավորներին:

«Սալդաթի տուտը հենց բերդը մտավ թե չէ՛, հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասուքը էլ չէին թողնում, որ մարդի բերանը բաց ըլի: Բայց ով փրտ տներ, լավ էր տեսնում, որ է՛ն ձեռներն, է՛ն աչքերը որ քարացել, սառել երկնքին էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ՝ ասում էին, որ դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնելը հայերի համար»<sup>16</sup>:

«не бойтесь, не бойтесь»ը (Մի՛ վախենաք, մի՛ վախենաք). անգամ փոքրիկ երեխաները, — պատմում է Լաչինովը. — իրենց մանկական կանչով թռթկում էին «Здравствуй! здравствуй!»<sup>17</sup> (Բարև՛, բարև՛):

Ռուսական զորքերի մեջ կարգ պահպանել չէր լինում, ամեն ոք նետվում էր առաջ փրկելու տառապալներին: Ժողովուրդը ինքը ընդառաջ էր գնում իր ազատիչներին:

Երևանի գրավումից հետո, մյուս օրը, պարիսպի առաջ տեղի է ունենում զորահանդես: Աշտարակեցիները ռուսական հաղթական զորքերի առաջ գոհարանական մաղթանք է



Եփրեմ կարողիկոսը զինավորում է գեներալ Եմոլովին

Ականատեսներից մեկ ուրիշը՝ հայտնի դեկաբրիստ Ե. Ե. Լաչինովը, իր «Նոստոլանություններ»ի մեջ պատմում է հայերի ուսանելին հանգիստի սրտաշարժ եղելությունների մասին:

«Հայերը, — նկարագրում է Լաչինովը, — ծեր թե մանուկ, պարսիկների վալրագություններից սարսափած, խուճապահար փախչում էին դեպի ուսաց զորքը, աղաղակելով. «Русь! русь! здрасти! здрасти!» (Ռո՛ւս, ոո՛ւս բարև՛, բարև՛), այս երկու բառով արտահայտելով իրենց սրտի սարսափը, սերն ու խնդրանքը, իսկ դրան ի պատասխան լսվում էր ուս զինավորների հուժկու ու փրկարար

կատարում: Մաղթանքից հետո ռուսական բոլոր հրանոթները միասին համադարկ են տալիս՝ ավետելով աշխարհին՝ հայոց ազատագրման նոր դարագլուխը:

1827 թվականի հոկտեմբերի 3-ին, Ներսես Աշտարակեցին Սարդարաբադի և Երևանի հաղթական գրավման առթիվ գրում է Եփրեմ Կաթողիկոսին.

«Ողորմութիւն Աստուծոյ բարձրացաւ ի վերայ Հայաստան աշխարհի և Սրբոյ Տաճարի իւրում էջմիածնի և ամենայն որդւոց Սրբոյ Լուսաւորչին, որով և ի 19 սեպտեմբերի ընդ լուսածագն 20, առաւ Սարդարաբադն, և ի 24 նորին պաշարեալ զԵրևան, ի

16. Խ. Արովյան, 3-րդ հատոր, Երևան, 1948 թ., էջ 179:

17. Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, 4-րդ հատոր, Երևան, 1951 թ., էջ 205—206:

1 հոկտեմբերի ընդ առաւօտն առաւ անառիկ կոչեցեալն Երեւան, ի վերայ առաջնումն մեռեալ ոչ անելի քան 4 սալդատ և երկրորդին և ոչ մի վասն առմանն, զոր անտարանեալ Ձեզ, Սուրբ Աջոյ Ձերում եմ և մնամ իսկական վերապատուութեամբ...

Զոր մոռացայ յիւրումն կարգի յաւելում աստէն, զի Հասան խան և Սվրհան Դուկի խան հանդերձ բազում խանիւք սարպազաց և 2.500 զօրօք գան առ քեզ այդր ի Թիֆլիզ կալանատրեալ, յորժամ կարեն սաղմոսել բերանք ձեր ամենեցուն. Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցիք զիս և ի թշնամիսն իմ ետես ակն իմ»<sup>18</sup>:

1827 թվականի դեկտեմբերի 6-ին աղատագրված Երեւանում կազմվում է ժամանակավոր վարչություն, որի ղեկավար կազմի մեջ մտնում է նաև Ներսես Աղտարակեցին:

Մեր հոգևածից դուրս է նկարագրել ռուսական բանակի հաղթանակները Մարանդում, զորքերի հաղթական մուտքը Թավրիզ և այլն, ընդհուպ մինչև Թյուրքմենչայի 1828 թվականի փետրվարի 10-ի (հին տոմարով) հայտնի հաշտության պայմանագիրը, մինչև պատերազմի ավարտը, հայերի գաղթը Պարսկաստանից և այլն: Միայն կասենք, որ ուրիշ ոչ մի դաշնադիր կամ պայմանագիր հայերի համար չունեն որ անկասկածաբար իսկ խոշոր նշանակությունը, ինչ Թյուրքմենչայի պայմանագիրն էր. այն եղավ մի դարձակետ հայերի համար:

Երևանի գրավումը համաժողովրդական ցնծություն և ուրախություն էր առաջ բերել ամենուրեք. հայերի մեջ: Հեռավոր Հնդկաստանից, Թյուրքիայից, Ռուսաստանից ու Պարսկաստանից շնորհավորանքի սրտառուչ նամակներ էր ստանում Հայոց ազատագրման գործին այնքան սրբությամբ նվիրված Ներսես Աղտարակեցին:

Մեծ գոհունակություն է առաջ բերում նաև հայության լայն խավերի մեջ Թյուրքմենչայի պայմանագրի կնքման բարեհաջող լուրը, ամենուրեք այդ առթիվ եկեղեցիներում մաղթանքներ են կատարվում, ցնծության տոներ են տեղի ունենում և այլն:

18. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, Բղթապանակ № 55, վավերագիր № 152:

Այսպիսով, Արեւելյան Հայաստանը ազատագրելու և Ռուսաստանին միացնելու դժվարին ու մեծ գործում իր խոշոր մասնակցությունն ու անգնահատելի աշխատանքն է կատարել հայ ժողովրդի շահերի լավագույն պաշտպան, եռանդուն հայրենասեր Ներսես Աղտարակեցին:

Աղտարակեցին փայլում է իր կազմակերպչական տաղանդով: Ռուս-պարսկական սրտերազմի ողջ ընթացքում չկա մի պահ, որ Աղտարակեցին քաշված լիներ գործից: Եվ իրոք չէր, որ 1828 թվականի հունվարի 28-ին, ռուս-պարսկական պատերազմի ժամանակ աչքի ընկնող ծառայությունների համար նա պարգևատրվում է Ալեքսանդր Նևսկու շքանշանով: Այս շարժուն, տոկուն կամքով մարդը, ամենահուսահատական բույներին անգամ ընկճվել չգիտեր: Նա ամեն տեղ էր. մեկ տեսնում ենք նրան կամավորական զինքը կազմելիս, մեկ ռուսաց առաջապահ զորքն առաջնորդելիս, պաշար է հայթայթում ռուսաց բանակին, պաշտպանում է Էջմիածնի վանքը, կոշեր է գրում և այլն:

Ներսես Աղտարակեցին աննման հայրենասեր է, նրա հայրենասիրությունը այնպիսիներից չէ, որ մի վայրկյան առկաթում են ու մարում, նա մինչև վերջն էլ մնաց բուռն ու կրակոտ հայրենասեր և պատահական չէր, որ ժողովուրդը նրան անվանում էր «ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՍ»<sup>19</sup>:

125 տարի է անցել Արեւելյան Հայաստանի Ռուսաստանին միացվելու պատմական օրից: Այսքան տարիներ հետո, երբ մենք այժմ, մեր թոճիւրում, թերթում ենք մեր նանցլաի պատմության դժգույն էջերը, ապա մեր առջև խոյանում է իր կերպարի ողջ հոյակապությունը անվեհեր հայրենասեր Ներսես Աղտարակեցին:

19. Ներսես Աղտարակեցին թողված է Էջմիածնի Տաճարի զանգակատան հարավ-արևելյան կողմում: Նրա մարմարյա տապանաքարի վրա արձանագրված է հետևյալը.

«Պաշտպան Հայրենեաց  
Կաթողիկոս Ամենայն Հայոց  
Ներսես Ե. Աղտարակեցի,  
Մենալ ի 13 փետրվարի 1761,  
վախճանալ ի 13 փետրվարի 1857»:

